ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՆԶՈՐԵՍԿԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ -ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

Նախքան Խնձորեսկի եկեղեցական-ծխական դպրոցի հիմնման և նրա գործունեությանն անդրադառնալը, անհրաժեշտ ենք համարում հակիրճ ներկայացնել պատմական ժամանակաշրջանի այն իրադարձությունները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են խնդրո առարկա հարցին:

Այսպես, XIX դարի 70-ական թվականներից սկսած՝ հայ իրականության մեջ որոշակի աշխուժություն ապրեց ազգային դպրոցը, ինչը, անկասկած, կապված էր դարի 50-60-ական թվականների ազգային զարթոնքի և սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետ: Չնայած դպրոցական գործը շարունակում էր մնալ եկեղեցու ձեռքում, բայց հասարակական նախաձեռնություններն արդեն սկսում էին կարևոր դեր խաղալ[1]: Ընդհանրապես հայկական մշակույթի պատմության մեջ այս ժամանակաշրջանի հիմնական առանձնահատկությունն այն է, որ հայ դպրոցը զարգանում էր ոչ թե միայն հայկական գաղթօջախներում, ինչպես նկատելի էր նախկինում, այլ նաև բուն Հայաստանում: Սակայն, ինչպես երևում է ժամանակի պատմական փաստաթղթերից ու մամուլի տեղեկություններից, պետական աջակցության բացակայությունը և ժողովրդի կենսամակարդակի ցածր աստիճանը բացասաբար էին անդրադառնում դպրոցական կյանքի կանոնավոր ու արդյունավետ զարգացման վրա:

---

* Հոդվածը ներկայացվել է 27.11.2019 թ., գրախոսվել՝ 15.12.2019 թ., տպագրության ընդունվել՝ 20.12.2019 թ.:

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 179:

Լինելով ցարական կայսրության կազմում՝ Արևելյան Հայաստանը չէր կարող դուրս մնալ այն ընդհանուր գործընթացներից, որոնք տեղի էին ունենում կայսրության իրականության մեջ: XIX դարի 60-ական թվականների բարեփոխումներն իրենց բարերար ազդեցությունն ունեցան նաև դպրոցական ասպարեզի զարգացման վրա: 70-80-ական թվականներին իրականացված մի շարք նախաձեռնությունների շնորհիվ դպրոցական գործը որոշակի զարգացում ապրեց կայսրության ողջ տարածքում, այդ թվում և Այսրկովկասում: 1864, 1871, 1872, 1888 թվականներին ընդունված որոշումներով ու կանոնադրություններով լուրջ փոփոխություններ կրեց հանրակրթական գործը թե՛ բովանդակությամբ և թե՛ կառուցվածքով:

1867 թ.-ին ուսումնական գործի կանոններ հաստատվեցին նաև Այսրկովկասի համար: Դրանց հիմնական նպատակն էր կովկասյան դպրոցը, անկախ ազգային էությունից, համապատասխանեցնել կայսրության ընդհանուր դպրոցական համակարգին և, որ ամենակարևորն էր, դասավանդման հիմնական լեզուն դարձնել ռուսերենը: Կրթական բանագավառն ընդգրկող բարեփոխումներն իրենցից ներկայացնում էին գաղութացման յուրօրինակ տարբերակ: Կովկասյան ուսումնական շրջանի հոգաբարձության ենթակայության տակ էին անցնում բոլոր պետական դպրոցները բացի հայկական և ուղղափառ եկեղեցիների տրամադրության տակ եղած դպրոցներից:

Այս կանոնների ընդունումից հետո իրական հնարավորություններ ստեղծվեցին ազգային դպրոցների ցանցի ընդլայնման համար: Հատկապես հրատապ դարձան նոր դպրոցական կանոնների մշակումն ու ընդունումը, քանի որ հայ դպրոցն առանց կանոնադրության թողնել, հատկապես Կովկասի ուսումնական մասի նոր կանոնների ընդունումից հետո,

կնշանակեր հնարավորություն տալ իշխանությունների՝ անցանկալի միջամտությունների համար[1]:

Այս առումով վճռական քայլեր ձեռնարկեց Գևորգ V կաթողիկոսը: 1866 թվականի սեպտեմբերին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելուց[2] հետո, Վեհափառի առաջին քայլերից մեկը եղավ հայ ազգային դպրոցական գործի կարգավորումը: 1867 թ. հունիսի 14-ին նրա նախաձեռնությամբ Էջմիածնի միաբաններից ձևավորվում է ուսումնական խորհուրդ՝ դպրոցական կանոնադրության մշակման նպատակով:

1868 թ. հուլիսին հրապարկվում են հայկական ծխական դպրոցների առաջին ընդհանուր կանոնները: Ըստ այս կանոնների՝ յուրաքանչյուր գյուղում պետք է բացվեր եկեղեցական ծխական դպրոց: Այդ կապակցությամբ կանոններում ուղղակի ասվում էր. «Ամենայն եկեղեցիք, որ ի քաղաքս եւ ի գիւղօրէս, պարտին ունիլ ի սրահի իւրեանց զմի ծխական դպրոց»[3]: Ընդսմին՝ եկեղեցական ծխական դպրոցի հիմնական նպատակ էր հռչակվում. «Նպատակ ծխական դպրոցաց է կրթել զամենայն հայազգի մանկունս ի սկզբնական գիտութիւնս հայացի դպրութեան, յորոց ցանկացողք կարեն մտանել ի թեմական դպրոցսե[4]: Այս դպրոցների գոյության միջոցների աղբյուրն են. «ա. սահմանեալ տուրք ծնողաց աշակերտաց, բ. Նվիրատուութիւնք բարեպաշտ անձանց, գ. տոկոսիք եկեղեցական դրամագլխոց անտի ըստ կարգադրութեան թեմական Առաջնորդին եւ ըստ կանխագոյն գիտութեան Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց»[5]:

Կանոնադրության կարևոր կետերից էր հոգաբարձության ստեղծումը: Եկեղեցական ծխական դպրոցները պետք է

---

[1] Տե՛ս **Ավանեսյան Ա.**, **Հարությունյան Գ.**, Արցախի կրթական համակարգը, հ. Ա, Ստեփանակերտ, 2014, էջ 106:

[2] Տե՛ս **Աբեղյան Մ.**, **Գևորգ Դ.**, Մեծագույն կաթողիկոս ամենայն հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 29:

[3] Կանոն Յաղագս ծխական հոգեւոր դպրոցացն Հայոց որ ի Ռուսաստան, «Արարատ», Ս. Էջմիածին, Վաղարշապատ, 1868, № Զ, էջ 70:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

փաստացի կառավարվեին ժողովրդի կողմից ընտրված և թեմական խորհրդի կողմից հաստատված հոգաբարձուների կողմից: Երեք հոգուց բաղկացած հոգեբարձուների խորհրդի կազմում պետք է լինեին մեկ հոգևորական և երկու աշխարհական:

Եկեղեցական-ծխական դպրոցներն իրենց էությամբ կրթության զարգացման նոր աստիճան նշանավորեցին: Այս դեպքում նախ՝ դպրոցը հանձնվում էր որոշակի մասնագիտական մակարդակ ունեցող ուսուցիչների, այնուհետև՝ ձևավորվում էր դաս-դասարանային համակարգը: Իսկ եթե հաշվի առնենք կայսրության ողջ տարածքում ընթացող համընդհանուր ռուսականացման գործընթացը, ապա ծխական դպրոցների նշանակությունը հայապահպանման գործում անուրանալի է:

Ցարական իշխանություններին հատկապես անհանգստացնում էր հայկական դպրոցների բացման անսպասելի տեմպը: 1873 թվականի Կովկասի ուսումնական մասի նոր կանոններով երկրամասի բոլոր դպրոցները (պետական, մասնավոր, հասարակական) ենթարկվեցին ուսումնական շրջանի հոգաբարձության տնօրինությանը, իսկ ոչ ուղղափառ եկեղեցական դպրոցները՝ նույն հոգաբարձության հսկողությանը: Այս կանոնների անորոշությունը հանգեցրեց նոր կանոնների ընդունման անհրաժեշտության, ուստի 1874 թ. հուլիսի 19-ին ընդունվեցին լրացուցիչ կանոններ հայկական դպրոցների համար: Հայկական դպրոցները, ըստ այդմ, մնում էին հայոց եկեղեցու տնօրինության տակ, իսկ պետական վերատեսուչները պետք է միայն վերահսկեին, որպեսզի այդ դպրոցներում դասավանդվեր ռուսաց լեզուն[1]:

Պատմական այս անդրադարձից հետո ուրվագծենք Զանգեզուրի գավառի Խնձորեսկ գյուղի եկեղեցական-ծխական դպրոցի պատմությունը: Արխիվային վավերագրերը որոշակի վկայություններ են պարունակում Խնձորեսկի ծխական դպրոցի բացման և կենսագործունեության մասին, որն իր գոյության

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 159:

ընթացքում հաղթահարել է օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված բազում դժվարություններ:

Այսպես՝ Խնձորեսկում ծխական առաջին դպրոցի հիմնադրման տարեթիվ է ընդունված 1885 թվականը: Եվ նույնիսկ 1985 թվականին գյուղում շուքով նշվեց դպրոցի հիմնադրման 100-ամյակը: Իրականում չկա արխիվային մի որևէ ամբողջական փաստաթուղթ, որ վկայեր 1885 թ.-ին ծխական դպրոց հիմնելու մասին: 1885 թ.-ը, որպես Խնձորեսկի եկեղեցական ծխական դպրոցի հիմնադրման տարեթիվ, արխիվային փաստաթղթերում հանդիպում ենք 1911-1912 թթ. ուսումնական տարվա համար կազմված մի տեղեկագրում, որտեղ «Ե՞րբ է հիմնվել դպրոցը» սյունակում գրված է 1885 թ.-ը[1]: Սակայն այս տվյալը բավարար չէ պնդելու, որ Խնձորեսկում դպրոց հիմնվել է այդ թվականին: Նույն կարծիքին է նաև Ս. Խուդոյանը արևելահայ դպրոցի պատմությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ[2]:

Խնձորեսկ. Ս. Հռիփսիմե եկեղեցի

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ 157, թ. 19-20:

[2] Տե՛ս **Խուդոյան Ս.**, Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ. (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1988, էջ 124:

Փաստերը վկայում են, որ Խնձորեսկում ծխական դպրոց հիմնվել է 1871 թ.: Այսպես, երբ 1868 թ.-ին հայոց եկեղեցին, օգտվելով Կովկասում դպրոցական գործի կարգավորման նպատակով ցարական իշխանությունների 1867 թ. ընդունած մի շարք կանոնադրությունների ընձեռնած հնարավորություններից, իր տրամադրության տակ վերցրեց հայկական դպրոցների բացման գործը, կաթողիկոսի կողմից ստեղծված տեսչական հանձնաժողովը որոշում ընդունեց հայկական բնակավայրերում դպրոցների բացման մասին: Այս գործընթացը կարգավորելու, իրավիճակի մասին հստակ պատկերացում ունենալու նպատակով և՛ իշխանությունները, և՛ հայոց եկեղեցին, իհարկե, երկու տարբեր նպատակներով, սկսեցին հաշվառել հայկական բնակավայրերում գործող դպրոցները, և այդ կապակցությամբ պետք է կազմվեին համապատասխան տեղեկանքներ, որոնք պետք պարունակեին գործող դպրոցների մասին անհրաժեշտ տեղեկություններ: 1871 թվականին ռուսերենով կազմված տեղեկագրի մեջ մի շարք դպրոցների շարքում ներկայացված են նաև Խնձորեսկ դպրոցի մասին տեղեկություններ: Ըստ այդմ՝ 1871 թվականին Խնձորեսկ գյուղում գործում էր մեկ դպրոց, դասավանդում էր մեկ ուսուցիչ, սովորում էր 41 աշակերտ[1]:

Ակնհայտ է, որ տեղեկագիրը կազմված է ցարական իշխանությունների պահանջով, քանզի կայսրության ազգային շրջաններում դպրոցների գոյությունը մեծապես պայմանավորված էր հետևյալ հանգամանքով, արդյոք ռուսերեն դասավանդվո՞ւմ էր այդ դպրոցներում, թե՞ ոչ: Այս պահանջը նախատեսված էր դարի 60-ական թվականներին Այսրկովկասում կրթության բարեփոխումների վերաբերյալ ընդունված կանոններով, որտեղ հատկապես այս պահանջը, կենսագործվում էր ամենայն խստությամբ:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 32, թ. 4:

1872 թվականին Կոնսիստորիայի երեք անդամների ստորագրությամբ՝ Երևանի թեմի փոխառաջնորդին ուղարկ-ված տեղեկագրում կրկին արձանագրված է, որ Խնձորեսկում գործում է մեկ դպրոց, որտեղ սովորում են 24 աշակերտ և դասավանդում է մեկ ուսուցիչ[1]: Իսկ 1875 թ. կազմված գործող դպրոցների ցանկում նշված է, որ Խնձորեսկի դպրոցում սովորում է 26 աշակերտ, ուսուցիչն էր Քարատակցի Գաբրիել Վարդունին: Վերջինս ավարտել էր Շուշի քաղաքի «արքունի ուսումնարանը»[2]:

Արդ, բերված փաստերը վկայում է, որ Խնձորեսկում դպրոց հիմնվել է ոչ թե 1885 թ.-ին, ինչպես սովորաբար նշվել է, այլ՝ 1871 թվականին: Հավելենք, որ 1871 թ. տեղեկագրում ծխական դպրոցը եղել է մեկդասյա, իսկ 1885 թ.-ին այն հավանաբար դարձել է երկդասյա:

Նշենք, որ ցարական իշխանություններն ամեն առիթ օգտագործում էին խոչընդոտելու հայկական դպրոցների գործունեությունը: Նրանց հատկապես անհանգստացնում էր հայկական դպրոցների աճը և հատկապես հասարակության ակտիվ աջակցությունը տեղերում բացված դպրոցներին: Մի կողմից իշխանություններն ուժեղացնում էին վերահսկողու-թյունը, մյուս կողմից՝ արհեստական խոչընդոտներ ստեղծում նրանց գործունեության համար:

Խնձորեսկի ծխական դպրոցն իր գոյությունն ընդհա-տումներով շարունակեց մինչև 1890 թվականը: Լուծարվում է հոգաբարձուների խորհուրդը: Ծխական դպրոցի փակվելուց հետո բացվել են մասնավոր դպրոցներ: 1893 թ.-ին Սյունյաց թեմի փոխանորդ Հովհաննես վրդ. Շիրակունու կողմից կազմված «Ուսումնական հիմնարկութիւնք» տեղեկագրում ասվում է, որ Խնձորեսկում գործում էր երկու «շտատնի» (քաղաքացիական) դպրոց[3]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 40, թ. 69:
[2] Նույն տեղում, թ. 36:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 300, թ. 80:

Տեղեկագիրը հետաքրքիր է նրանով, որ հստակ թվերով ներկայացվում է նաև Խնձորեսկի բնակչության թիվը: Տեղեկագրի համաձայն՝ 1893 թ.-ին գյուղն ուներ 4429 (2510 ար., 1919 իգ.) բնակիչ[1]:

Հարկ է նշել, որ ծխական դպրոցի փակումից կարճ ժամանակ անց ծխականներն ակտիվ գործունեություն ծավալեցին դպրոցի վերաբացման համար: Վերաբացվող դպրոցի ծախսերը հոգալու համար՝ գործակալ Գարեգին քին. Տեր-Մինասյանը և Խնձորեսկի տանուտեր Աղաջան Բաղդասարյանը 1891 թ. կազմակերպում են հանգանակություն: Նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո գյուղ է հրավիրվում Երևանի թեմի եկեղեցական-ծխական ուսումնարանների տեսչության ներկայացուցիչը՝ «բարիկրոն Մեսրոփ քահանայ Միլիքյանցը», որի «հրավիրանօք» էլ 1891 թ. հունիսի 24-ին գումարվում է «Խնձորիսկ գիւղի հայ հասարակութեան» ժողովը», որը պետք է քննարկեր ուսումնարանի վերաբացման հարցը[2]: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ էր նախ և առաջ ընտրել հոգաբարձության խորհուրդ, որն էլ պետք է ավարտին հասցներ ուսումնարանի վերաբացումը: Ժողովում քննարկվեց նաև հանգանակված 1800 ռուբլու ծախսերի բաշխման հարցը և որոշվեց. այդ գումարից 1200 ռուբլին հատկացնել, որպես «թոշակատրամ աշակիրտնիրի», իսկ 600 ռուբլին՝ դպրոցին՝ գույք ձեռք բերելու համար: Որոշվեց նաև՝ ուսումնարանի պահպանման համար ամեն տարի կատարել նման հանգանակություն: Իսկ դպրոցի տնտեսական գործերը հոգալու համար, ինչպես նշված է ժողովի արձանագրության մեջ, «ընտրիցինք միր մէջից պարոն Խաչատուր Տանիէլյանին, Իվան Ստիփանյանին»[3]:

Նորընտիր հոգաբարձության խորհրդի կազմի մեջ ընդգրկվեցին Մահտեսի Ավանես Սարգսյանցը, Ասկանդար Սարգիսյանցը և Ս. Հռիփսիմե եկեղեցու ծխատար քին.

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում, գ. 235, թ 28:

[3] Նույն տեղում:

Մարտիրոս Տեր Սարգսյանցը: Հոգաբարձության խորհրդի նախագահն էր Տեր Մարտիրոս քհն.: Ժողովը նրանց տվեց հասարակության «կողմից լիազօր նիրկայացուցիչնիրի կարգավիճակ, որոնք պետք է կատարին Հոգէբարձական բոլոր պարտաւորութինիրն, առանց շիղվիլու հոգոր իշխանութեան սահմանաց տպրոցական կարգ ու կանօնիրիցն»[1]:

Ժողովն ընդունեց նաև համախոսական-միջնորդագիր՝ ուղղված թեմական ուսումնարանների տեսչությանը: Համախոսականում ներկայացվող խնդրանքն ավելի հիմնավոր լինելու համար նրա տակ ինքնագրով ստորագրեցին 400-ից ավելի խնձորեսկցիներ[2]: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է այն պնդումը, որ Խնձորեսկում դպրոցի գոյության փաստը ոչ թե պետք է փնտրել դարի 70-80-ական թվականներին, այլ՝ անցյալի առավել հեռավոր խորքերում:

Չնայած այս նախաձեռնությանը՝ կարճ ժամանակ անց ստեղծված հոգաբարձուների խորհուրդը ցրվում է, որի հետևանքով դադարում է գործել նաև նորաբաց ուսումնարանը: Ցարական իշխանությունները բոլոր հնարավոր միջոցներով խոչընդոտեցին նրա գործունեությունը, ինչի արդյունքում վերաբացված ծխական դպրոցը գործեց ընդամենը մեկ տարի: Պաշտոնից հեռացվեց տանուտեր Աղաջան Բաղդասարյանը և նրան փոխարինեց Հովակիմ Գյուլնազարյանը (Գյուլուզարանց Ակեմը): Հոգաբարձական խորհրդից հեռացան նաև Մահտեսի Ավանես Սարգսյանցը և Ասկանդար Սարգիսյանցը: Միայնակ մնացած ծխատար քահանա Մարտիրոս Տեր Սարգսյանցը, որքան էլ փորձեց վերականգնել հոգաբարձության գործունեությունը, ոչ մի արդյունք չտվեց:

Այսուհանդերձ դպրոցի վերաբացմանն ուղղված ջանքերը չդադարեցին: Այս տեսակետից հետաքրքիր է խնձորեսկցի Իվան Սելիկյանի բաց նամակը՝ ուղարկված Թիֆլիսում ականավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունու

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 29-30:

խմբագրությամբ լույս տեսնող «Մշակ» պարբերականին[1]: Բաց նամակը կրում է «Դպրոցը փակվում է» վերնագիրը, որի բովանդակությունը որոշակի պատկերացում է տալիս գյուղում դպրոցի շուրջ ծավալվող հասարակական տրամադրություն-ների մասին: Նամակը գրված է դպրոցի փակման կապակ-ցությամբ խորը հիասթափությամբ, ինչը հեղինակին շատ դեպքերում հասցնում է ծայրահեղության: Հեղինակը ցավով գրում է. «Խնձորիսկ գիւղի ուսումնարանի տոնիրը փոխանակ աւելի լայն բացիլու, այլ սկսիլին պինդ կերպօք փակում, թողում ուսման ծարաւ իրախաներին տուրսը: Ցավալի է, բայց ցավացող ու հոգացող չկա»[2]: Հոդվածագիրը դժգոհում է, որ գյուղում չկան այնպիսի մարդիկ, որոնք կարողանային «խնտրելով, յորտորի-լով ու աղաչիլով» խելքի բերեին խավարում խարխափող «ասախկալներին», որպեսզի վերջիններս «չհակառակվեին ուսումնարանի տոնիրը պացվիլուն»: Եվ քանի որ գյուղում չկան նման մարդիկ, ուստի «ասպարիզը բաշիբոզուկ ասախկալնիրին է (նկատի ունի գյուղի ղեկավարությանը). տորենց էլ իյարկի ինչինք հարկաւոր ուսումն եւ ուսումնարանը: Քանի որ գողին մութն է հարկաւոր»[3]: Հոդվածագիրը նպատակ ուներ օգտա-գործել «Մշակ»-ի հնարավորությունները և խնդրի լուծման համար կոչով դիմել գյուղից հեռացած մեծ քանակությամբ երիտասարդությանը, որոնք հիմնականում կենտրոնացված էին «Բալախանիում» (նկատի ուներ Բաքվի համանուն թաղամասը- *Գ. Հ.*) և «Անդրկասպիի երկիր Մերվ քաղաքում»: «Աղաչանոք-պաղատանոք ծիզ խնդրում իմ, հայրենակից եղբայրք իրիտա-սարդնիր, գոնե մի հայիրին տաս աւանտող ուսուցիչ լինի, ուղարկիցեք գիւղը հավաքի փողոցնիրում թափառող ծիր իրախանիրին հինց միմիան նամակ գրիլը լինի սովորեցնի, որպիսիզի ծիր տիկար հայրիրը եւ մայրիրը մի կտոր թուղթ չիվիրցնեն տուսն գնալ, որ ծիզ վիրել նամակ գրիլտեն. իյարկե

[1] ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ 130, թ. 36-38:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

այն ժամանակ ծիր իրախաները ծիր նամակնիրը գրգրին» [1],- ասված է նամակում: Այս նամակ-հոդվածը, որն իր բովանդակությամբ հիասթափություն ապրած մարդու մենախոսություն է հիշեցնում, գրվել է սեպտեմբերի 10-ին: Նույն հեղինակի սեպտեմբերի 16-ին գրված մեկ այլ թղթակցության մեջ տեղեկացվում է, որ «Վիրջապիս իրկար խրատիլուց ու յորտորիլուց յիտո լսիցի, որ ամսոյ 10-ին գիւղումս իլիլի ծխական դպրոցի հոգիբարձութիան ընտրութիուն, բայց չիմացա որ թաղում եւ ում տան միջ»[2]:

1893 թ. սեպտեմբերի 10-ին տեղի ունեցած ծխականների ժողովում ձևավորվում է հոգաբարձուների նոր խորհուրդը: Մինչ այդ գյուղի հասարակության ժողովը դիմել էր թեմի ուսումնարանական տեսչությանը՝ գյուղի դպրոցը վերաբացելու խնդրով: Եվ ահա 1893 թ. սեպտեմբերի 10-ին Երևանից դուրս են գալիս և հոկտեմբերի 1-ին Խնձորեսկ են հասնում երկու ուսուցիչներ՝ Արշակ Նավասարդյանը և Աստվածատուր Հասրաթյանցը՝ վերաբացված դպրոցում աշխատելու համար: Նույն օրն ուսուցիչները ներկայանում են հոգաբարձական խորհրդին: Ինչպես երևում է ուսուցիչների նամակներից, հոգաբարձուների խորհուրդը մինչև ուսուցիչների ժամանումը, փաստացի ոչ մի քայլ չէր ձեռնարկել դպրոցի կազմակերպման համար: Միայն նրանց ժամանումից հետո «հոգաբարձությունը փայտիղինը ժողովուրդից հավաքիցին և գյուղի արհեստավորների միջոցով պատրաստեցին տասերեք նստարան, երկու սեղան, մեկ գրատախտակ և երեք աթոռ»[3]:

Սկզբնական շրջանում հոգաբարձության և ուսուցիչների միջև անհամաձայնություն է ծագում դպրոցական սենյակների շուրջ: Ուսուցիչները գտնում են, որ անհրաժեշտ է դպրոցը տեղափոխել առավել բարվոք տեղ, քանի որ Անապատի ուսումարանի շենքը նպատակահարմար չէ: Ուսուցիչները դժգոհում են նաև, որ հոգաբարձությունը չի հոգացել դպրոցի և

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] ՀԱԱ ֆ. 7, ց. 1, գ. 88, թ. 1-4:

իրենց համար վառարանի ու վառելափայտի հարցը: Ավելին, հոգաբարձության խորհրդի անդամներից մեկը «…գնացիլ է Էրիվանու կողմիրը առեւտուրին, միուսը (գիւղական ուսուցիչ) ոչ թէ մոգինում է գործիրին, այլեւ տիղը ընկած ժամանակը ժողովրդին գայթակղիցնում է, իսկ միզ մօտ կիղծաւորում է»: Իսկ խորհրդի նախագահը, ինչպես երևում է ուսուցիչների նամակից, բացարձակապես ուշադրություն չի դարձնում իրենց խնդրանքներին:

Չնայած հոգաբարձության անտարբերությանը՝ գյուղի բնակչությունը ոգևորությամբ է ընդունում ուսուցիչների ժամանումն ու դպրոցի վերաբացման փաստը: Այդ մասին վկայում են հենց ուսուցիչները՝ գրելով. «Ժողովուրդը չէ խնայում, օգնում է մեզ ինչով կարող է, միայն հոգաբարձությունը եւ տանուտիրը ջանք չին դնում»[1]:

Այդ գործում ցարական իշխանությունների հետ համագործակցում էին գյուղի տանուտերը: Ժամանակի արխիվային փաստաթղթերն այդ կապակցությամբ հստակ վկայություններ են պարունակում, թե ինչպես է տանուտերն իր ազդեցության տակ վերցնում դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամներին և այդպես խոչընդոտում դպրոցի գործունեությանը:

Խնձորեսկի ծխական դպրոցի հնարավորությունների ու նրա կենսագործունեության մասին ամբողջական պատկերացում է տալիս արխիվային մի փաստաթուղթ, որն իր բովանդակությամբ վիճակագրական տեղեկություններ է պարունակում նաև 1894/95 ուսումնական տարվա վերաբերյալ: Ըստ այդ փաստաթղթի՝ Խնձորեսկի ծխական ուսումնարանը բացվել է 1893 թվականին[2]: Իրականում, ինչպես երևում է արխիվային փաստաթղթերից, նշված թվականին այն ոչ թե բացվել, այլ վերաբացվել է:

[1] ՀԱԱ ֆ. 7, ց. 1, գ. 88, թ. 1-4:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 113, թ. 14:

Բայց, անկախ այս փաստարկից, վիճակագրական տեղեկագիրն ամբողջական պատկերացում է տալիս դպրոցի կենսագործունեության վերաբերյալ: Ըստ տեղեկագրի՝ դպրոցը բացվել է 1893 թվականին և եղել է երկդասյա: Ունեցել է երեք բաժանմունք, իսկ առաջիկա տարին պետք է ունենար նաև չորրորդ բաժանմունքը: Երկդասյա ուսումնարանը եղել է, ինչպես տեղեկանքում է ներկայացված, «տղայոց»: Նշված ուսումնական տարում սովորել է 57 աշակերտ, որոնք, ըստ դասարանների (բաժանմունք), բախշված են եղել հետևյալ կերպ. Ա բաժանմունքում՝ 19, Բ բաժանմունքում՝ 24, Գ բաժանմունքում՝ 14: Իսկ աշակերտների սոցիալական կազմն ունի հետևյալ պատկերը. քահանայի որդիներ՝ 4, ազնվականի՝ 2-ը, արհեստավորի՝ 8, Բաքվի նավթագործարանի ծառայողների՝ 17 հողագործ-խաշնարածի՝ 22 և «այրի կնոջ որդիք»՝ 4: Աշակերտներից ամենամեծը 16 տարեկան էր[1]:

Նշված ուսումնական տարում դասարանից դասարան փոխադրումները կատարվել են հետևյալ կերպ. Ա բաժանմունքից՝ 10, Բ բաժանմունքից՝ 11, Գ բաժանմունքից՝ 8: Ավարտող չի եղել, իսկ 14 աշակերտներ փոխադրվել են վերաքննությամբ: Նշված ուսումնական տարում նույն դասարանում մնացած աշակերտների մասին կա հետևյալ տեղեկությունը. Ա բաժանմունքում նույն դասարանում են մնացել 3 աշակերտ, Բ բաժանմունքում՝ 7, Գ բաժանմունքում՝ 3 աշակերտ: Այս փաստը հետաքրքրական է այն իմաստով, որ դպրոցում ուսուցման ընթացքը դրված է եղել հետևողականության սկզբունքի վրա:

Աշակերտներից մեկը, որի անուն-ազգանունը չի նշվում, կամավոր հեռացել է դպրոցից: Փաստաթղթում պատճառաբանված է, որ նրա հայրը մահացել է «մրսածությունից և ականջացավից», և ընտանիքի կարիքը նրան ստիպել է ընտրել այդ ճանապարհը:

Ուսումնական տարում դպրոցի ուսուցիչներ են եղել 23 տարեկան Արշակ Նավասարդյանցը և 22 տարեկան Աստվա-

[1] Տե՛ս նույն տեղում:

ծատուր Հարությունյանցը: Նավասարդյանցն ավարտել էր Երևանի Հայոց թեմի հոգևոր դպրանոցը, իսկ Ա. Հարությունյանցը՝ Երևանի Ռուսաց Ուսուցչական սեմինարիան: Ուսուցիչներից՝ Ա. Նավասարդանն ավանդել է կրոն, հայոց լեզու, Երգ և հայոց գեղագրություն, իսկ Հասրաթյանցը՝ ռուսաց լեզու, ռուս. գեղագրություն և գծագրություն[1]:

Ըստ ավագ ուսուցչի՝ դպրոցի ուսուցման ընթացքի վրա բացասական ազդեցություն է ունեցել շենքի անբարվոք վիճակը, ուսուցման պարագաների պակասը և ավագ ուսուցչի՝ Արշակ Նավասարդյանցի հիվանդությունը: Միաժամանակ նշվում է, որ դպրոցական բակի բացակայության պատճառով մարմնամարզական դասեր չեն կազմակերպվել: Դրան խանգարել են նաև համապատասխան գույքի բացակայությունը:

Ինչպես երևում է տեղեկագրից, դպրոցի գույքային հնարավորությունները ևս չափազանց խղճուկ էին: Դպրոցն ուներ ընդամենը 16 նստարան, 3 սեղան, 6 աթոռ, 2 գրատախտակ, 3 վառարան, 1 թեյնիկ, 8 թեյի բաժակ՝ իրենց տակդիրով, 5 հողե ափսե, 2 կուժ, 2 թեյի գդալ, 2 լապտեր, 1 թիթեղի զոնք և 2 հասարակ մահճակալ: Սա էր գույքի ընդհանուր ցուցակը:

Դպրոցն ունեցել է նաև գրադարան՝ հարյուր կտոր գրականությամբ: Այս գրքերի ցանկի մասին մեզ պատկերացում է տալիս 1895 թվականի մի հաշվետվություն, որտեղ նշված է աշակերտների կողմից կարդացված գրքերի ցանկը: Նայելով նշված գրքերի ցանկին՝ անկեղծորեն զարմանում ես, թե առաջին հայացքից աշխարհից կտրված այս ձորում, մեծ ճիգերով գործող դպրոցի աշակերտներն ինչ գրքեր էին կարդում և պատկերացում կազմում նրանց հետաքրքրությունների շրջանակի մասին:

Ծխական դպրոցն իր աշակերտներին միայն տառաճանաչություն չի սովորեցրել և ոչ էլ պատահական գիտելիքներ: Այստեղ ուսունասիրվել են Կրոն, Հայոց լեզու, Ռուսաց լեզու, Երգ և Թվաբանություն: Այս առարկաները խորությամբ չեն

[1] ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 113, թ. 14:

ուսունասիրվել, պարզապես, դրանց վերաբերյալ ուսուցանվել են տարրական գիտելիքներ: Ուսումնարանն առաջնորդվել է նախօրոք կազմված ուսումնական ծրագրով, իսկ տարեվերջին առանձին ներկայացվել է, թե ինչ դասեր են անցել,ու ինչն է մնացել կիսատ: Այսպես՝ պահպանվել է 1894-95 թթ. Ուստարում անցած դասերի ցանկը, որը վերնագրված է այսպես. «Խնձոր-բեսքի Հայոց Եկ. ծխական ուսումնարանի անցած դասիրի յընթացս 1894/95 թթ. ուսումնական տարուայ», և որն իր բովանդակությամբ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու ուսումնարանի ուսուցման բովանդակության մասին[1]: Այսպես՝ առանձնացված են հիմնական առարկաները դրանք են՝ կրոն, հայոց լեզու, երգ, ռուսաց լեզու, թվաբանություն: Նշված ուստարում Ս. քին. Սահակյանը կրոն առարկայից, ըստ տարիքային խմբի, մատուցել ու սովորեցրել է հետևյալ նյութը. առաջին նախակրթարանում՝ բոլոր պատմությունները և չորս շարական, Բ նախակրթարանում՝ բոլոր պատմությունները, յոթ շարական և Հայաստանեաց եկեղեցու Հնգանակը, Գ տարում՝ բոլոր շարականները և տասնմեկ շարական[2]:

Հայոց լեզվից առաջին նախակրթարանում ուսուցանվել է Մայրենի լեզվի դասագրքի նյութերը՝ բացի տասը հոդվածներից, որոնք չեն հասցրել յուրացնել, և այդ մասին տեղեկացվում է տեսչությանը: Բ նախակրթարանում ուսուցանվել են հիսունհինգ հոդվածներ, որոնք աշակերտները սովորել են կարդալ և պատմել, իսկ տասնյոթ հոդվածներ՝ անգիր սովորել: Միաժամանակ սովորել են խոնարհել և հոլովել, որոշել նախադասության անդամները: Գ տարվա նախակրթարանում կարդալ ու պատմել են սովորել 102 հոդվածները, իսկ 13 ոտանավորներ սովորել են անգիր: Միաժամանակ ուսուցանվել է նաև «կանոնաւոր խոնարհիլ, հոլովիլ, վիրլուծիլ նախադասութիւնիրը եւ նոցա անդամները»[3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, գ. 113, թ. 12:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Դպրոցում ուսումնասիրվել է նաև ռուսաց լեզուն, որը պարտադիր էր հատկապես Արևելյան Հայաստանում, և այդ առարկայի ուսուցումը գտնվում էր ցարական իշխանության ներկայացուցիչների վերահսկողության ներքո: Այս առարկայի ուսուցումով էր պայմանավորված տվյալ դպրոցի գոյության հարցը[1]:

Ծխական դպրոցի ուսուցման ընթացքի մասին դրական է արտահայտվում նաև Գորիսի ծխական դպրոցի ավագ ուսուցիչ Գեղեոն Տեր-Մինասյանը՝ 1995 թ. հունիսի 12-ին տեսուչին ուղարկած իր վերլուծականի մեջ: Նա գրում է. «Խնձորեսկում քննութիւները նշանակւած էր ամսի 5-ին եւ 6-ին: «Քննութեանց արտաքինին նայիլով՝ կարիլի է ասիլ ընդհանրապէս լավին պարապիլ ուսուցիչները: Եթե ի նկատի ունինանք տիղական պայմաննիրը..., պէտք է խոստովանիլ, որ գոհացուցիչ է»:

Խնձորեսկի ծխական ուսումնարանում դասավանդել են մասնագիտական պատրաստվածություն ունեցող ուսուցիչներ, որոնց կցվել են ընթերականներ՝ այլ դպրոցների տարեկան քննություններն անցկացնելու համար: Դա երևում է դպրոցի ավագ ուսուցիչ Արշակ Նավասարդյանի նամակից, որ գրվել է 1895 թ. հունիսի 9-ին՝ ուղղված թեմի ծխական ուսումնարանաց տեսչին: Այդ նամակով ուսուցիչը տեղեկացնում է տեսչին, որ նրա N 2225 կարգադրության համապատասխան ինքը տեղեկացրել է Տաթևի, Ախլաթյանի, Բռնակոթի ուսումնարանների հոգաբարձուներին և ուսուցիչներին՝ տարեկան քննություններին իրեն ընթերական նշանակվելու մասին: Միաժամանակ ուսուցիչը տեղյակ է պահում, որ մայիսի 20-ին ինքն իմացել է, որ Ախլաթում աշակերտների քչության և ուսուցչի հիվանդության պատճառով ուսումնարանը մայիսի 28-ին «արձակիլուի» և ուսուցիչն անմիջապես հեռանալու է: Իսկ Տաթևի կապակցությամբ նա հայտնում է, որ «...լսիլինք, որ ուսուցիչը ուզում է շտապով հիռանալ: Տաթեւու քննութիունը նշանա-

[1] Տե՛ս նույն տեղում:

կիլինք յունիսի 8-ին եւ 9-ին, բայց մինչեւ այսօր նոքա ձիիր չին ուղարկիլ, ուստի մինք էլ միր այստիղի պարտքը կատարիլուս յիտոյ վաղը միկնիլուինք դէպի Էրեւան»:

Խնձորեսկի դպրոցում՝ հատկապես նրա պահանջները հոգացող հոգաբարձուների խորհրդի գործունեությունն այնքան էլ ներդաշնակ չի եղել: Այդ մասին վկայություններ են պարունակում արխիվային փաստաթղթերը: 1895 թ. հունիսի 14-ին Հայոց եկեղեցու թեմական և ուսումնարանաց տեսչին ուղղված Խնձորեսկի դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մարտիրոս քին. Տեր-Սարգսյանը նամակով բողոքում է, որ տեղի ժողովուրդն անգոհունակ է իր պաշտոնավարությունից, իսկ ինքը մենակ չի հասցնում վերահասու լինել գործերին: Այնուհետև քահանան բողոքում է, որ իր ընկերները, այսինքն՝ հոգաբարձուների խորհրդի մյուս անդամները՝ Իվան Ղրիտիրյանը և Բագրատ Ղարագյոզյանն, առանց իրեն «իմացնիլու անորոշ ժամանակով հեռացիլին դէպի Անդրկասպիա երկիրները իրվանց սիպական գործիրով եւ իրիանց արած ծախքիրն ու մուտքիրն ուսումնարանի վիրաբերիալ գործիրում իրանց մոտ պահիլով»[1]: Այնուհետև քին. «ամինախոնարհաբար» խնդրում է, որպեսզի տեսուչն ընդունի իր հրաժարականը և այդ պաշտոնում նշանակի մեկ այլ քահանայի[2]:

1906 թ. փետրվարի 10-ին տեղի գերագույն «պրիստավի» կարգադրությամբ փակվեց ծխական դպրոցը: Ծխական դպրոցի տեսուչին ուղղված խնդրագրում Ս. Հռիփսիմե և Ս. Թադեոս եկեղեցիների քահանաները հավաստիացնում են, որ պահպանվում է «Անապատի» ավերակների մոտ գտնվող շենքը, և «…աղաչումինք միզ միք թողնի նորից տգիտութեան խաւարի մեջ ընկնիլ: ...Մինք նման ինք այն իրիխային, որի ձեռքը խաւարի մեջ վառած մի մոմ է տւած նրան դէպի լույսը առաջնորդիլու, սակայն յանկարծ կես ճանապարհին ձիռքի

[1] Նույն տեղում, թ. 10:
[2] Տե՛ս նույն տեղում:

լույսը հանգչիլով մնում է յուսահատ, լալով ու ողբալով խաւարի մեջ»:

Խնձորեսկի եկեղեցական-ծխական երկդասյա դպրոցի գործունեության խոչընդոտելուն ուղղված ցարական իշխանությունների իրավաչափ և ոչ իրավաչափ քայլերը շարունակվեցին նաև հետագայում:

Դեռևս 1891 թ. փետրվարի 12-ին ցարական կառավարությունը որոշեց եկեղեցական-ծխական դպրոցները տեղափոխել նահանգային ուսումնական վարչությունների ենթակայության տակ: Սա հայկական միջավայրի համատարած ռուսականացման՝ հեռուն գնացող քաղաքական քայլ էր: Այս որոշմանը հաջորդեց հայ ուսուցիչներին պետական վկայական տրամադրելու գործընթացի համար արհեստական խոչընդոտներ ստեղծելը: Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը փորձեց հանդիպել Պետերբուրգի կառավարության հետ՝ կարգավորելու այս գործընթացը: Այս անգամ կառավարական շրջանակներն առաջ քաշեցին դպրոցների պահպանման միջոցների հարցը՝ պատճառաբանելով, քանի որ դպրոցների մեծ մասը պահպանվում է ժողովրդից հավաքած միջոցներով, ուստի իրավունք չունի եկեղեցական կոչվելու, և պահանջեցին այդ դպրոցները հանձնել պետական գերատեսչությանը: 1897 թվականին կայսերական Պետական խորհրդի որոշմամբ՝ հայկական եկեղեցական-ծխական բոլոր դպրոցները ենթարկվեցին լուսավորության նախարարությանը՝ անկախ պահպանման միջոցներից[1]: Սա ենթադրում էր, որ աշակերտությունը զրկվելու էր ազգային լեզվով կրթություն ստանալու հնարավորությունից: Սակայն դպրոցները, այդ թվում՝ Խնձորեսկի ծխական դպրոցը, հրաժարվեցին ենթարկվել այդ որոշմանը և փակվեցին:

1898 թվականի մարտին Նախարարների կոմիտեն որոշում է կայացնում հայկական դպրոցներին պատկանող գույքը պետական իշխանությունների տնօրինությանը հանձ-

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, էջ 762:

նելու մասին՝ դատարան դիմելու իրավունք վերապահելով մյուս կողմին:

Այս ընթացքում Խնձորեսկի եկեղեցական-ծխական դպրոցը գործում էր ընդհատումներով: 1893 թվականին բացվելով՝ փակվեց 1896 թվականին: Դպրոցը մի կարճ ժամանակահատված գործեց և փակվեց 1898 թվականին: Մինչև 1901 թվականը դպրոցը չգործեց և նույն թվականին վերաբացվեց, բայց դարձյալ երկար չգործեց:

Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինը, ով հայտնի էր իր հակահայ, կայսերապաշտական հայացքներով, պահանջեց բռնագրավել հայ եկեղեցու գույքը: Այդ պահանջին համապատասխան՝ 1903 թ. հունիսի 12-ին ցարը ստորագրեց հայտնի տխրահռչակ օրենքը, որն իր բովանդակությամբ ուղղված էր հայկական մշակույթի ու կրթության դեմ: Օրենքը հանգեցրեց հայ ժողովրդի արդարացի ընդվզմանը:

Այդ օրենքի դեմ ընդվզեց նաև Խնձորեսկը: Ծխական դպրոցի հոգաբարձուների և ծխատար քահանայի նախաձեռնությամբ հրավիրված ծխականների ընդհանուր ժողովը որոշեց բոլոր հնարավոր միջոցներով պահպանել դպրոցը և բողոքի նամակ ուղղեցին փոխարքային:

Կովկասի նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովը, զգալով հնարավոր մասսայական ընդվզումների վտանգը, կառավարությանն առաջարկեց թուլացնել սեղմվող կապանքները: 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ը նոր հրամանագրով հայ եկեղեցուն վերադարձրեց նրան պատկանող ունեցվածքը և կրթական գործերով զբաղվելու իրավունքը: 1906 թվականին հայկական ծխական դպրոցները, այդ թվում և Խնձորեսկի ծխական դպրոցը, նորից վերաբացվեցին: 1907 թվականին դպրոցն Անապատից տեղափոխվեց գյուղից վերև նոր կառուցված շենքը, և թվում էր, թե բնականոն հունով կշարունակի իր առաքելությունը: Նոր վերաբացված դպրոց սկսեց հաճախել 75 աշակերտ. ուսուցիչներն էին՝ Բագրատ Ղարագյոզյանը, Տիգրան Սազան-

դարյանը, Հովսեփ Աղասյանը[1]: Բայց համատարած ռուսակա-նացման քաղաքականություն որդեգրած ցարական իշխանու-թյունները ժամանակ առ ժամանակ բոլոր հնարավոր միջոցնե-րով խոչընդոտում էին եկեղեցական-ծխական դպրոցների գոր-ծունեությունը:

1909 թվականին դպրոցը նորից հայտնվեց դժվարին դրության մեջ: Դպրոցի նյութական ծանր դրության հետևանքով կազմալուծվեց ուսուցչական կազմը և դպրոցը հայտնվեց փակման եզրին: 152 աշակերտ կանգնեց ուսում ստանալու հնարավորությունը կորցնելու փաստի առջև: Դպրոցում դասավանդող ուսուցիչներն էին՝ Ներսիսյան դպրոցի շրջա-նավարտ Սեդրակ Եդիգարյանը, Գևորգյան ճեմարանի շրջա-նավարտ Գրիգոր Պալյանը, Շուշիի թեմական դպրոցի շրջա-նավարտներ Գրիգոր Մարտիրոսյանը և Հովսեփ Տեր-Հով-սեփյանը[2]:

Խնձորեսկի ծխական-եկեղեցական երկդասյա դպրոցի համար նոր լուրջ փորձություն դարձավ պետական դպրոցի բացումը, որը, ըստ էության, սքողված քայլ էր՝ ուղղված ծխական դպրոցի դեմ: 1912 թ. հուլիսի 24-ին թվագրված պետական դպրոցի տեսուչի՝ ժողովրդական ուսումնարանների նահանգային «դիրեկտորին» ուղղված բողոք-զեկուցագրից երևում է, որ պետական դպրոց Խնձորեսկում հիմնվել է 1898 թվականին և փակվել 1906 թվականին բայց դրան զուգահեռ, ընդհատումներով գործել է նաև եկեղեցական-ծխական դպրոցը՝ յուրօրինակ պայքար մղելով իր գոյության համար:

Չնայած պետական դպրոցի փակմանը՝ ժամանակ առ ժամանակ իշխանություններն առաջ էին քաշում նորից վերաբացելու հարցը՝ այն հակադրելով ծխական դպրոցներին: Որպեսզի իշխանությունն հիմնավորեին պետական դպրոց բացելու անհրաժեշտությունը, ամեն կերպ փորձում էր խոչընդոտել ծխականի գործունեությանը: Քանի որ ծխական

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 265, թ. 29:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 544, թ. 12-13:

դպրոցները պահպանվում էին հոգաբարձուների պատասխանատվությամբ, ժողովրդական միջոցների հաշվին, ուստի գավառային իշխանությունը տանուտիրոջ միջոցով կարողանում էր ներգործել հոգաբարձուների վրա կամ հասարակությանը տրամադրել ծխական դպրոցների դեմ:

Գորիսում լույս տեսնող «Գավառ» շաբաթաթերթի մի լրատվության համաձայն՝ 1909 թվականին՝ ուսումնական տարվա սկզբին, Խնձորեսկի ծխական դպրոց էր հաճախում 100 աշակերտ, իսկ նույն թվականի դեկտեմբերին այդ թիվը նվազել էր, հասնելով՝ 40-50-ի, քանի որ «…հասարակությունը չի աջակցում և տրտնջում էե: Այնուհետև, լրատվության մեջ նշված է, որ «…մի շարք մարդիկ համախօսական են կազմում դպրոցը պետականի փոխելու»[1]:

«Չնայած ներկայ ուսում. տարում բացւած է ծխական դպրոցը, - գրում է «Գավառե պարբերականը, - սակայն մի շարք գիւղի բարիքը հասկացող, սրտըհեռիչ ձեւացնողներ ցանկանում էին փակել տալ ծխական դպրոցը եւ պետականի վերածել, որը մինչ եւ օրս ձգձգւել էր»[2]:

1910 թվականին գավառի պետական դպրոցի տեսուչ Զետգինիձեն, ժամանելով Գորիս, մի ուսուցչի՝ «ստրաժնիկիե հետ ուղարկում է Խնձորեսկ՝ տարիներ առաջ փակված դպրոցի գրքերը ետ բերելու նպատակով[3]: Նման փոքրոգի քայլերով գավառային իշխանությունները փորձում էին խոչընդոտել ծխականի բնականոն ընթացքը և հասարակության տրամադրությունը շրջել դեպի պետական դպրոց բացելու անհրաժեշտությունը:

Սպառելով եկեղեցական-ծխական դպրոցի գործունեությունը խոչընդոտելուն ուղղված բոլոր արհեստական արգելքները՝ իշխանությունն անցավ դպրոցի դեմ ուղղված բացահայտ գործողությունների:

---

[1] «Գաւառ», Գօրիս, 1909, N 1:

[2] «Գաւառ», Գօրիս, 1910, N 10:

[3] Տե՛ս նույն տեղում:

Այսպես, շենքը, որտեղ գործում էր ծխական երկդասյա դպրոցը, կառուցվել էր 1902-1903 թվականների ընթացքում՝ բացառապես ծխականների միջոցներով: 1912 թ. փետրվարի 20-ին հոգաբարձության փոխթեմակալին ուղղված գրությունից երևում է, որ շինությունը 1906 թ. մարտի 14-ին համայնքային ժողովի կողմից պաշտոնապես հաստատված մի համախոսականով հանձնվել է Հոգևոր իշխանությանը: Գաղութային իշխանությունները, հավանաբար հաշվի առնելով այս փաստը, 1911 թ. սեպտեմբերի 20-ին հաշտարար միջնորդի և ոստիկանական վերակացուի մասնակցությամբ, ոչ առանց ճնշումների, գյուղի իջևանատանը հրավիրում են ժողով և կազմում մի համախոսական՝ իբր հասարակությունը նախկին ծխական դպրոցի շենքը կամավոր հանձնում է պետական դպրոցին: Իսկ 1911 թ. դեկտեմբերի 11-ին թվագրված և փոխթեմակալին ուղղված գրության մեջ նշվում է, որ հոգաբարձությանն ընդդիմանալու դեպքում «ոստիկանութիւնը իր դիրքը կհաստատի ծխականին պատկանիալ շէնքում»: Միաժամանակ նշվում է, որ հավաստի աղբյուրներից հոգաբարձությունը տեղեկացված է նահանգային «դիրեկցիայի» կողմից պետական դպրոցի ուսուցիչների նշանակման մասին և որ վերջիններս հաջորդ տարվա հունվարին պետք է ժամանեն Խնձորեսկ ու սկսեն պարապմունքները:

Ծխական դպրոցի ուսուցիչներն ու հոգաբարձուները վճռական էին տրամադրված՝ «պաշտպանելուե դպրոցի շենքը և այդ կապակցությամբ ակնհայտ նշում են. «Մինք իրբեք խաղաղ միջոցով չինք զիջանի միր խնամքին յանձնուած ծխ. դպրոցի շինքը պիտականին: Միզ տանջումէ այն միտքը, որ անկարողինք առանց տարակուսիլու կտրականապիս ճանաչիլ դպրոցիս շինքը՝ որպէս Հոգևոր իշխանութեանը պատկանող անխախտ սիպականութիւն»: Հոգաբարձուներն «աղաչումին» հոգևոր իշխանությանը լուծել ծխական դպրոցի կնիքի հարցը և ցուցում կամ ուղղություն տալ հետագա քայլերի համար, հակառակ դեպքում անդարձ կկորցնենք այն:

Հունվարին, ինչպես նախատեսված էր, պետական դպրոցը չի կարողացել սկսել պարապմունքները, քանի որ հոգաբարձությունը և ուսուցիչներն իրենց սատարող հասարակության հետ միասին կարողացան դիմադրել: Խնձորեսկ ժամանած պետական դպրոցի ուսուցիչները ձեռնունայն վերադառնում են:

Նահանգային իշխանությունը, հաշվի առնելով լարվածության հնարավոր խորացման վտանգը, մի որոշ ժամանակ խուսափեց վճռական գործողություններից: Իսկ ծխական դպրոցում տեղի ունեցած «խառն ժողովի» մասին հոգաբարձության՝ Տաթևի հոգևոր կառավարությանն ուղղված զեկույցում նշվում է, որ չնայած հասարակությունը համախոսականով խոստացել է պետական դպրոցին հանձնել ծխական դպրոցի շենքը, բայց նախկինում էլ նման փորձեր եղել են, և որևէ դրական արդյունքի չեն հասել:

Չնայած ծխական դպրոցի ճակատագրով մտահոգ մարդկանց դիմադրությանը, այնուամենայնիվ, նրանք ևս տարակուսանքի մեջ էին, թե իրականում ում է պատկանում այդ շենքը, որոհետև, ինչպես երևում է հոգևոր իշխանությանն ուղղված մի քանի գրություններից, նրանք իրենց ձեռքի տակ չունեին բավարար փաստաթղթեր՝ շենքի պատկանելիության հարցը իրավական ճանապարհով հիմնավորելու համար: Նրանք ունեին ընդամենը մեկ փաստաթուղթ ի դեմս ծխական «մատյանի», որտեղ նշված էր, որ ծխական դպրոցի շենքը 1906 թվականին, որպես սեփականություն, հանձնվել էր հոգևոր իշխանությանը: Իսկ այս փաստը, ըստ հոգաբարձուների, բավարար չէր հարցը դատական կարգով լուծելու համար:

Սակայն հոգևոր իշխանությունը մի որոշակի ժամանակահատված չէր շտապում պատասխանել եկեղեցական-ծխական դպրոցի շուրջ ծավալվող դեպքերի կապակցությամբ Խնձորեսկից ուղարկված բողոք-գրություններին, ինչն առանձին դեպքերում արդարացիորեն հարուցում էր դպրոցի ուսուցիչների և հոգաբարձուների դժգոհությունը, ովքեր չէին կողմնորոշվում ստեղծված իրավիճակում: 1912 թ. փետրվարի

20-ին փոխթեմակալին ուղղված գրության մեջ նրանք դժգոհում են. «Հոգաբարձությունը բախտ չէ ունեցել իր դիմումներից մեկին գոնէ մի պատասխան ստանալու: Չգիտենք, իսկապէս, ինչով բացատրել Ձեր այսօրինակ անփույթ վերաբերմունքը: Հոգաբարձութիւնս Ձեզ միայն յոյս ու ապաւէն ուներ այս տարտամ ու տարաբախտ հանգամանքներում: Սակայն նրա երազները երազ մնացին, նրա յոյսերն ի դերեւ ելան»: Նույն Բ. Ղարագյոզյանն իր գրության մեջ անթաքույց նշում է.

«...տարակույս չունիմ, որ դպրոցիս ղեկավար մարմնի կողմից Տաթեւի Յոգեւոր կառավարութիւնից մինչեւ Նորին Ս. Օծութեանն ուղղված բազմաթիւ դիմումնիրն ու զիկուցումնիրը (փրկիլու 1500 ծուխ ընդգրկող հայ գյուղի ծխ. դպրոցն իր շենքով անհետ կորչիլու վտանգից) դժբախտաբար մնացիլին «ձայն բարբառոյ յանապատի», այդ ևս մազաչափ կասկածից անգամ դուրս է»:

Խորեն եպիսկոպոսին ուղղված հոգաբարձության մարտի 18-ի խնդրագրի մեջ նշվում է, որ դպրոցը կնիք չունի և առանց դրա դժվար է լինելու իրավական պայքար մղել շենքի պատկանելիության հարցում: Նույն բովանդակությամբ մի գրություն եպիսկոպոսին ուղարկվել է նոյեմբերի 10-ին:

Իրականում այնպես չէր, որ հոգևոր իշխանությունն անտարբեր էր ծխական դպրոցի և ուսումնական շենքի ճակատագրի հարցում: Ըստ էության՝ ծխական դպրոցի հոգաբարձությանը հուզում էր երկու առանցքային հարց՝ շենքի պատկանելիության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը և կնիք ունենալու իրավունքը: Նրանց պնդմամբ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ դատական կարգով լուծել շենքի խնդիրը: Սակայն հոգևոր իշխանությունը ոչ թե չէր արձագանքում նրանց գրություններին, այլ պարբերաբար այդ հարցը քննարկում էր Տաթևի հոգևոր կառավարության հետ: Հոգևոր իշխանությունը փորձում էր հավասարակշռված, զգուշավոր քայլերով լուծել դպրոցի շենքի խնդիրը, որովհետև ցարական իշխանությունը հայկական և ընդհանրապես ազգային դպրոցներին վերաբերվում էր որպես կայսրության

դեմ ուղղված մարտահրավերներ պարունակող երևույթի: Հենց դրանով էր պայմանավորված նաև Խնձորեսկի ծխական դպրոցի գողգոթան իր ձևավորման պահից սկսած:

1912 թ. մարտի 14-ին Վեհափառ Կաթողիկոսի դիվանը Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսին է ուղարկում ծխական դպրոցի հոգաբարձության զեկուցումը՝ պահանջելով ուսումնասիրել այնտեղ ներկայացված բոլոր կետերը և պատասխանել: Դիվանը սեպտեմբերի 13-ին նորից է պահանջում Խորեն եպիսկոպոսից՝ տեղեկություն տալ Խնձորեսկի ծխական դպրոցի շենքի վերաբերյալ: Նույն թվականի նոյեմբերի 10-ին փոխթեմակալին ուղղված գրությամբ Դիվանը պահանջում է ներկայացնել, թե Խնձորեսկի ծխական դպրոցի շենքի հարցն ինչ ընթացք է ունեցել: Դեկտեմբերի 28-ին Դիվանը մեկ անգամ ևս պահանջում է եպիսկոպոսից՝ տեղեկություն տալ, թե ինչ քայլեր են կատարված, արդյոք ծխական դպրոցների տեսուչը ժամանե՞լ է այնտեղ, թե՞ ոչ:

1912 թվականի հուլիսին հոգևոր իշխանությունը դիմում է Ելիզավետապոլի նահանգի «ժողովրդական ուսումնարանների դիրեկտորինե: Վերջինս թեմակալին ուղղված 1912 թ. օգոստոսի 3-ի գրությամբ խնդրում է համապատասխան կարգադրություն անել՝ շենքը նահանգային ժողովրդական ուսումնարանների վարչության տնօրինությանը հանձնելու համար, իսկ տնօրենը հավաստիացնում է, որ «…ինքն իր կողմից դեմ չէ, որ նույն շենքում գործի նաեւ ծխական դպրոցը»: Ստացվում է այնպես, որ ճնշումներով ու սպառնալիքներով համարյա թե խլում են ծխական դպրոցին պատկանող շենքը և հետո հավաստիացնում, որ իրենք դեմ չեն նույն շենքում պետական դպրոցի հետ ծխական դպրոցի համատեղ գործունեությանը:

Վերոհիշյալ գրության բովանդակությունից նաև երևում է, որ շենքի հարցում անզիջում դիրքորոշում են ունեցել դպրոցի հոգաբարձությունը, ուսուցիչները և գյուղի հասարակության այն մասը, որը գիտակցում էր հիշյալ քայլերի իրական նպատակը: Հակառակ դեպքում «դիրեկտորը» թեմակալին չէր

խնդրի միջամտել շենքն իրենց վարչական լիազորության մեջ ընդգրկելու համար:

Շենքի պատկանելիության հարցն իր տեսանկյունից է ներկայացրել պետական դպրոցների տեսուչը նահանգային ժողովրդական ուսումնարանների դիրեկցիային ուղղված 1912 թ. հուլիսի 24-ին թվագրված զեկուցագրում: Տեսուչը փորձում է ապացուցել, որ շենքը՝ կառուցվել է ծխականների միջոցներով, բայց գանձարանը ևս ներդրում ունի դրանում: Նա պնդում է, որ այդ շենքը կառուցվելուց անմիջապես հետո հանձնվել է Պետական գույքի նահանգային վարչության կառավարմանը: Այնուհետև նշում է, թե իբր 1906 թվականին, պետական դպրոցը փակվելուց հետո, այդ շենքը ժամանակավորապես է հանձնվել ծխական դպրոցին: Տեսուչն իր զեկուցագրում ակնհայտ ստում է: Եթե իրականում դպրոցի շենքը շինարարության ավարտից հետո գտնվել է պետական գույքի կառավարման նահանգային վարչության տնօրինության տակ, այդ դեպքում ի՞նչ անհրաժեշտություն կար 1911 թ. սեպտեմբերի 19-ին հրավիրել ծխականների ժողով՝ շենքը պետական դպրոցին հանձնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար: Տեսուչը նշում է նաև մեկ այլ նման որոշման մասին՝ թվագրված 1912 թ. մայիսի 24-ին, ընդ որում՝ այս ոչ առանց հարկադրանքի հրավիրված ժողովների որոշումները նա ներկայացնում է որպես հաշտարար վճիռներ:

Իրականությունն այն է, որ գործող ծխական դպրոցի շենքը, ինչպես երևում է 1906 թվականի մարտի 8-ի հաշտարար վճռից, ծխականների ընդհանուր ժողովի կողմից 1906 թվականին հանձնվել է հոգևոր իշխանության կառավարմանը[1], ոչ թե պետական դպրոցը փակվելուց հետո է այն ժամանակավորապես հանձնվել ծխական դպրոցին, ինչպես փորձում է ներկայացնել տեսուչը:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 470, թ. 1:

Ծխական դպրոցի շենքի նկատմամբ իշխանությունների քայլի ոչ իրավական լինելն այնքան ակնհայտ էր, որ հոգևոր իշխանություն անցավ վճռական գործողությունների: 1912 թվականի սեպտեմբերի 19-ին փոխթեմակալը հրահանգում է Տաթևի հոգևոր կառավարությանը «արքունական կնիքով» կնքել Խնձորեսկի ծխական դպրոցի դռները և թույլ չտալ բացվելիք պետական դպրոցի տեսչին մուտք գործել շենք: Հոկտեմբերի 4-ին Խնձորեսկ է ժամանում պետական դպրոցների տեսուչը՝ ծխական դպրոցի շենքը բռնագրավելու նպատակով: Ինքնուրույն նախաձեռնությամբ նրան ընդդիմանում են ուսուցիչներն ու հոգաբարձուները: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 5-ին, Խնձորեսկի դպրոց են այցելում Տաթևի հոգևոր կառավարության նախանդամ Գարեգին քհն. Տեր-Մինասյանը, քարտուղար Տեր-Հարությունյանը և ծխական դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Դավիթ քհն, Տեր-Հարությունյանցի, անդամ Հովհաննես Սալիկյանի, ավագ ուսուցիչ Բագրատ Ղարագյոզյանի, ուսուցիչներ Գ. Աֆրիկյանի, Թեոդորոս Մայսուրյանի ներկայությամբ փակում ու կնքում դպրոցի բոլոր դռները՝ բացի ուսուցիչներին հատկացված սենյակից և «պահապան ծառայի» սենյակից: Տեսուչին բացատրում են, որ դպրոցի շենքը պետական դպրոցին կհանձնվի միայն դատական համապատասխան վճռից հետո: Այնուհետեւ կազմվում է արձանագրություն և ուղարկվում փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսին: Միաժամանակ խնդրում են փոխթեմակալին՝ արագ հրահանգելու, թե դպրոցի դռները կնքելուց հետո ինչ քայլեր պետք է ձեռնարկեն 150 աշակերտ-աշակերտուհիների ուսումը կիսատ չմնալու համար: Արձանագրության մեջ ուշագրավ է նաև փաստը, որ փաստաթուղթը չեն ստորագրել հոգաբարձության մյուս երեք անդամները հավանաբար խուսափելով իշխանությունների հետ հակադրվելուց:

Չնայած հոգևոր իշխանության այս վճռական քայլին՝ իշխանությունները նահանջելու մտադրություն չունեին: Հոկտեմբերի 6-ին պետական դպրոցը փորձում է սկսել պարապմունքները, բայց հոգաբարձությունը և ուսուցիչներն ընդդի-

մանում են: Հաջորդ օրը դպրոցի հոգաբարձության նախագահ Գարեգին քին. Տեր-Մինասյանցը և անդամ Ներսես քին. Տեր-Մինասյանցը դիմում են Հայոց Երևանից փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսին՝ ներկայացնելով իրավիճակը: Միաժամանակ գրության հեղինակները զգուշացնում են հոգևոր իշխանությանը, «...որ դպրոցի գրաւման առթիւ տատ յարուցանիլու դէպքում պակասիլու ին փաստաթղթիր դպրոցական շինութիւնը հոգեւոր իշխանութեան պատկանլուն վիրաբիրմամբ, սակայն փաստ է, որ 1906 թուից մինչեւ այժմ այդ շինութիւնը գուտնուիլ է Հոգեւոր իշխանութեան փաստացի տիրապիտութեան տակ եւ որ այդ մասին ամինքը կվկային»:

Պետական դպրոցի տեսուցուչը, ով ժամանել էր Խնձորեսկ ծխական դպրոցի շենքը բացվելիք պետական դպրոցին հանձնելու առաքելությամբ, դիմում է ոստիկանությանը:

Նոյեմբերի 5-ին Զանգեզուրի գավառի II մասի ոստիկանության վերակացու պարոն Կինսկին մի քանի ոստիկանների հետ գալով Խնձորեսկ, առանց խորհրդակցելու որևէ մեկի հետ, բռնությամբ, իր հայեցողությամբ եկեղեցական-ծխական դպրոցի շենքը կիսում է և մեծ մասը հանձնում «մինիստիրական դպրոցին» (նկատի ունեն պետական դպրոցը)՝ հարցականի տակ դնելով ծխական դպրոցի գոյությունը, որովհետև բաժանման արդյունքում ծխականի համար առանձնացված հատվածն այնքան փոքր էր ու անբարվոք, որ ուսումնական պարապմունքների իրականացումը դառնալու էր անհնար:

Դպրոցի շենքի շուրջ կրքերն ավելի են բորբոքվում: Հոգաբարձությունը և ուսուցիչները հայտնվում են թե՛ ցարական կառավարության և թե՛ գյուղի՝ նրանց կամակատար իշխանության ճնշումների տակ, որոնք ամեն ինչ անում էին հասարակությանը հակադրել ծխական դպրոցին: 1912 թ. օգոստոսի 30-ին Հոգաբարձության՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին հասցեագրված խնդրագրում ասվում է. «…գիւղում հեշտութեամբ գտնուիցին ազգադաւ եւ դժոխածին «մարդիկ», որոնք չզլացան ճիգ ու ջանք գործ դնել ինչպէս դպրոցը հիմնայատակ կործանելու եւ հոգաբարձութեանս ուժերը ջլատիլու, նույնպէս եւ

դպրոցիս «կուախնձոր» դարձած փառահեղ շէնքն օտարացնելու համար»: Դպրոցի ավագ ուսուցիչ Բագրատ Ղարագյոզյանը Երևանի փոխթեմակալին ուղղված 1913 թ. փետրվարի 21-ին թվագրված գրության մեջ ուղղակի գրում է. «Ազգադաւ եւ մոլեգին հրեշ մարդկանց կործանարար քայլն էր անտարակույս, որ իր նորմալ հունին մեջ ընթացող ներկայիս տարաբախտ եւ դժոխածին Խնձորեսկու առաջաւորնիրու աչքի փուշ ծխական դպրոցն իւր շինքով հասցրւից իր անկման օրհասական ժամին»:

Ժամանակի հեռավորությունից միակողմանի մեղադրել գյուղական իշխանությանը նման պահվածքի համար, կարծում եմ, օբյեկտիվության մեջ չի տեղավորվում: Ի՞նչ կարող էր անել գյուղական իշխանությունը՝ տվյալ դեպքում տանուտերը, ընդհանուր կայսերական քաղաքականության դեմ, երբ ամենափոքր կասկածելի պահվածքի համար կարող էր ճակատագրով պատասխան տալ: Նրանք պարտավոր էին հլու-հնազանդ կատարել ցարական իշխանությունների պահանջները՝ տվյալ դեպքում ծխական դպրոցի հաշվին լուծել պետական դպրոցի խնդիրը:

Իշխանությունների անբարեհաճ վերաբերմունքի պայմաններում դպրոցի հոգաբարձությունը ևս հայտնվում է անորոշության հորձանուտի մեջ: Այս կապակցությամբ արխիվային փաստաթղթերը հակասական տեղեկություններ են պարունակում: Դպրոցի ավագ ուսուցիչ Բագրատ Ղարագյոզյանի՝ փոխթեմակալին ուղղված նամակում հոգաբարձության անդամները, բացի Հովհաննես Սելիկյանից, մեղադրվում են «դավաճանութեան և ստորաքարշութեան մեջ»: Միաժամանակ, մի քանի օրվա տարբերությամբ, հոգաբարձությունը խնդրագրով դիմում է փոխթեմակալ Խորեն եպս, Մուրադբեկյանին՝ բողոքելով «պրիստավի» անօրինական գործողություններից և դպրոցական շենքի խնդիրը լուծելու հարցով: Հոգաբարձությունը խնդրում է հոգևոր իշխանության ցուցումը, և իրենք պատրաստ են «այնժամ անշիղ կիրպով շարունակիլ մեր մատաղ սիրունդի գործը: Գրության մեջ Հոգաբարձությունն ուղղակի գրում է. «...լալակին աղիրսում ինք լուծիլ շինքի

խնդիրը»: Ենթադրում եմ՝ ուսուցիչն ինչ-ինչ նպատակներով ծայրահեղություն է դրսեւորում հոգաբարձությանն ուղղված նման բնութագրությունների հարցում:

Յուրօրինակ թիրախ հանդիսանալով ցարական իշխանությունների համար՝ շատ հաճախ հասարակությանը ուղղակի տրամադրում էին նրանց դեմ կամ ենթարկում անհատական ճնշումների՝ նպատակ ունենալով այդպես կազմալուծել ծխական դպրոցը: Հակված չեմ պնդել, որ հոգաբարձությունը միշտ գործում էր անթերի և նրա նկատմամբ անարդար էին: Եղել են պահեր, որ հենց հոգաբարձության անդամների անտարբերության արդյունքում ծխական դպրոցը հայտնվել է լուրջ փորձության մեջ:

«Գավառ»-ում հրապարակված մի թղթակցության մեջ Խնձորեսկի ծխական դպրոցի հոգաբարձության անդամներին մեղադրում էին, որ նրանց պատճառով հասարակությունը հրաժարվում է երեխաներին ուղարկել դպրոց: «Այդ էլ իր յատուկ պատճառն ունի (նկատի ունենալով հասարակության երեխաներին դպրոց ուղարկելուց հրաժարվելու հանգամանքը), - գրում է թղթակիցը, - հոգաբարձու են ընտրել այնպիսի մարդկանց, որոնք հազիւ կարողանում են իրանց սեփհական գործերը վարել, այնպիսի մարդկանց, որոնց դիրքը եւ յարգը ընկած է գիւղումս ոչ միայն դպրոցի, այլ եւ հասարակական զանազան գործերի վերաբերմամբ: Եվ հասարակութիւնը իր կուժն ու կուլեն բերում եւ դպրոցի գլխին է կոտրում եւ երեխայ չի ուղարկում, կարծելով թե դրանով վնասում է հոգաբարձությանը»[1]:

Մեկ այլ թղթակցության մեջ նշվում է, որ հոգաբարձուների անփութության պատճառով գյուղի հասարակությունը դպրոցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցում բաժանվել է մի քանի խմբերի: «Հոգաբարձական կազմի դատապարտելի եւ ուսուցչական խմբերի որոշ չափով անփույթ գործունէութեանց պատճառ է, որ Խնձորեսկի ծխակ. դպրոցը

[1] «Գաւառ», Գօրիս, 1910, N 14:

ներկայումս խիստ աննախանձելի վիճակի մէջ է գտնուում. ժողովուրդը բաժանուած է թայֆաների։ Մի թայֆան ցանկանում է վերացումն ծխակ. դպրոցի եւ վերահաստատութիւն պետականի։ Երկրորդ թայֆան ոչ մի դպրոց չէ ուզում, երկուսից էլ յուսախաբուած է, երկուսն էլ ոչինչ չեն տալիս մատաղ սերնդին (ըստ իրանց)։ Երրորդ թայֆան ցանկալի է համարում թէ ծխականի եւ թէ պետականի գոյութիւնը. երկուսն էլ լինեն, ասում են III-ականները, գիւղացին որին հաւանութիւն կտայ այնտեղ էլ կուղարկէ իր զաւակին։ Չորրորդ թայֆայի էլ պահանջն է՝ ըստ ամենայնի ապահով եւ նախանձելի պայմանների մէջ դնել ծխական դպրոցը եւ ըստ այն, եթէ կարիք կզգացւի եւ միջոցներ էլ կլինեն՝ պետականին էլ հակառակ չէ։ Խոստովանելու է, որ վերջիններս կշեռքի աւելի ծանր կողմն են ներկայացնում»[1]։

1911 թվականին ընտրվում է նոր հոգաբարձություն, որին բաժին հասավ ծխական դպրոցի համար դժվարին մի ժամանակաշրջան, երբ ցարական իշխանությունների կողմից նորից առաջ քաշվեց պետական դպրոց բացելու խնդիրը։ Բայց շատ շուտով այս հոգաբարձությունը ևս հայտնվեց քննադատության թիրախում ու նորից հասարակությունը հակադրվեց նրան։ Պարզ երևում է, որ մի անտեսանելի ձեռք անընդհատ գործում էր հոգաբարձության և հասարակության միջև։ 1912 թ. փետրվարի 1-ին փոխթեմակալին ուղղված հերթական գրության մեջ պնդում է. «պատիւ ունիմ ցաւոք սրտի յայտնիլու որ դպրոցիս հոգաբարձութիւնը (բացառությամբ պ. Սեւլիկյանի) իր կոչման բարձրութիան նույնիսկ ամենաստոր աստիճանին վրայ անգամ չէ կանգնած. ամեն ինչ անհոգութեան դատապարտած...»։

Հոգաբարձության մեկ այլ գրության մեջ (1912 թ. փետրվարի 20) պահանջում են կազմի մեջ մտցնել Դավիթ Տեր-Հարությունյանց քահանային, ով վայելում էր հասարակության

[1] «Գաւառ», Գօրիս, 1910, N 26։

վստահությունը և կարող էր բնականոն հունի մեջ դնել հոգաբարձության գործունեությունը:

Հոգաբարձությունը՝ Խորեն Եպիսկոպոսին ուղղված մեկ այլ գրության մեջ դժգոհում է, որ 1911 թ. նոյեմբերի 17-ին ընտրվելով այդ պաշտոնում, պարտավորվել են գործել հօգուտ դպրոցի, «Բայց որովհիտեւ միզ ընտրող համայնքը տրժիլով իր գրաւոր որոշումները տատարիցրիլին դպրոցին հատկացած տուրքիրը վճարելուց...»: Նշենք, որ Խնձորեսկում ծխական դպրոցի պահպանման համար հատկացվում էր ձմեռային և ամառային արոտների համար գանձվող հարկերը:

1912 թ. սեպտեմբերի 2-ին Խորեն եպիսկոպոսին ուղղված գրության մեջ հոգաբարձության անդամ Հ. Սելիկյանը բողոքում է հոգաբարձության գործունեությունից՝ գրելով, որ կամ ինձ «…ազատ համարիցիք կամ պատվիրիցիք իմ անգործունյա ինկիրներին գործի անցնելու կամ վիրջապիս պատվիրիցիք նոր հոգաբարձության ընտրութիւն կատարի…»:

Սելիկյանի այս բողոքը զրպարտություն չէր: 1912 թ. սեպտեմբերի 22-ին Խորեն եպիսկոպոսի հանձնարարությամբ Տաթևի հոգևոր կառավարությունը Խնձորեսկ է ուղարկում տեր Գարեգին քահանային և քարտուղար Տեր-Հարությունյանցին, դպրոցի և հոգաբարձության հետ կապված խնդիրները լուծելու համար: Հրավիրված հոգաբարձության ժողովում հոգաբարձությունն ընդունում է իր հասցեին ուղղված քննադատությունները և պարտավորվում պատշաճ կերպով իրականացնել իր վրա դրված պարտավորությունները:

Ստեղծված իրավիճակում հոգաբարձության հետ կապված խնդիրը կարող էր ծանր հետևանքներ ունենալ ծխական դպրոցի հետագա գոյության իմաստով, երբ առաջ էր քաշված պետական դպրոց բացելու խնդիրը ծխական դպրոցի շենքի հաշվին:

Ծխական դպրոցի շենքի համար պայքարն, ըստ էության, արդյունք չտվեց: Պետական դպրոց բացելու իշխանության դիրքորոշումը մնաց անփոփոխ: Պարզապես՝ նահանգային ժողովրդական ուսումնարանների «դիրեկցիան» համա-

ձայնեց, որ շենքի մի մասում իր գործունեությունը շարունակի նաև ծխական դպրոցը: Հոգաբարձությունն ու ուսուցիչները ստիպված էին հաշտվել այս մտքի հետ և համաձայնեցին գործել մինչև դատական հայցի բավարարումը: Բայց դատական հայց այդպես էլ ո՛չ հարուցվեց և ո՛չ էլ բավարավեց: Իսկ Խնձորեսկից շարունակվում էր բողոքների տարափն՝ ուղղված հոգևոր իշխանությանը՝ ծխական դպրոցի միակ նեցուկին:

1912 թ. դեկտեմբերի 17-ին դպրոցի հոգաբարձության Հայրապետական թեմի փոխ-թեմակալ գերապատիվ Խորեն եպս. Մուրադբեկյանին հասցեագրած խնդրագրում տեղեկացվում է, որ Հոգաբարձությունը դժգոհում է, թե մի ընդարձակ ու մանրամասն գրությամբ այս ամենի մասին տեղյակ է պահվել նաև Վեհափառին, բայց «…չգիտինք թե ինչու մինչեւ օրըս միզ հոգաբարձութիանս ոչ մի լուր ոչ մի տիղիկութիւն չի յաղորդուից, որպեզի իմանանք եւ տիսնիք իրիրի տրութիւնը ինչ տրութիան հասաւ եւ ինչ լուծում ստացաւ»: Շենքը փաստացի կիսելով, ծխական դպրոցի վրա կախվում է փակվելու վտանգը, ինչին և հետամուտ էին իշխանությունները: «Թէ միզ հոգաբարձութեանս թէ ուսուցչական կազմի թէ աշակիրտութեան համար ստիծուիլ է մի շարք աննկարագրիլի ու մի չտիսնւած անհարմարութիւնիր, այնպիս որ՝ ոչ ուսուցչանոց ունինք, ոչ բաւարար դասրանիր, ոչ դահլիճ, ոչ խոհանոց եւ այդպիս մի շարք ոչիր…»: Այնուհետև ցավով տեղեկացվում է, որ եթե առաջիկայում միջոցներ չձեռնարկվեն, ապա դպրոցը կդադարի գոյություն ունենալուց: Այս փաստաթղթում միաժամանակ նշվում է, որ մենք (նկատի ունի Հոգաբարձությանը) և գյուղի հասարակությունը պատրաստ ենք ամեն քայլի, միայն թե հոգևոր իշխանությունը հուշի:

Սակայն շենքի կես մասում անգամ գործող ծխական դպրոցի նկատմամբ իշխանությունների կողմից անընդհատ խոչընդոտներ հարուցելը շարունակում էր մնալ առօրեական քաղաքականություն:

Տաթևի հոգևոր կառավարության՝ Խորեն եպիսկոպոսին ուղղված գրությունից երևում է, որ այս դեպքերից հետո

փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսը դիմում է Զանգեզուրի գավառապետին՝ ծխական դպրոցի բնականոն գործունեությունն ապահովելու և դպրոցի շենքն արտաքին «ոտնձգություններից» պաշտպանելու խնդրով: Գավառապետը հանձնարարում է Բ մասի «պրիստավին»՝ դպրոցը պաշտպանել «տիղացիների եւ այլոց միջամտութիւնից» մինչև դատավճռի կայացումը: Միաժամանակ հանձնարարվում է Խնձորեսկի տանուտերին՝ անձամբ հսկելու այդ կարգադրության իրականացումը:

Անորոշության մեջ հայտնված դպրոցի հոգաբարձությունը ստիպված 1912 թ. դեկտեմբերի 9-ին հրավիրում է «խառն արտակարգ» ժողով, որի նպատակն էր ընտրել «մի հանգանակիչ յանձնախումբ»՝ ջրօրհնեքի տոներին այցելելու թե՛ Գերապատվությանը և թե՛ Նորին Ս. Օծությանը՝ դպրոցի հարցը քննարկելու համար:

1912 թ. հոկտեմբերի 6-ից պետական դպրոցը սկսում է պարապմունքները, իսկ ծխական դպրոցը շարունակում էր դեգերումները: Նշված գրության հեղինակը կասկածանք է հայտնում, «…թէ առաջիկայ 13/14 ուս. տարում ծխական դպրոցիս կը թողնին արդիոք գոնէ կես մասում շարունակ» իր դասընթացը…»: Խնդիրն ավելի էր բարդանում, քանի որ դպրոցական շենքի այն մասը, որն իբր թողնվել էր ծխական դպրոցին, գտնվում էր անմխիթար վիճակում և առանց վերանորոգման հնարավոր չէր շահագործել: Իրավիճակը հաղթահարելու նպատակով նշված հանձնախումբը ժողովի կողմից հանձնարարություն ստացավ նաև այցելելու Կովկասի տարբեր կենտրոններ՝ «հրապարակական հանգանակութիւն կազմիլու՝ «դպրոցիս գիրազանցորեն անմխիթար դրութիւնը բաւարարիլու»: Ժողովի կողմից հանձնախմբի մեջ ընդգրկվեցին ուսուցիչներ Բագրատ Ղարագյոզյանը, Թեոդորոս Մայսուրյանը և հոգաբարձության անդամ Հովհաննես Սելիկյանը: Սակայն «…առանց պատշաճաւոր իշխանութեան թույլտուութիան անկարիլի էր նման հրապարակական բնույթ տալ միր հանգանակութիանը», ուստի այս նպատակով Բագրատ Ղարա-

գյոգյանը մեկնում է Գորիս՝ խորհրդակցելու Տաթևի հոգևոր կառավարության հետ: Պարզվում է Տաթևի հոգևոր կառավարությունն այդ հարցում որևէ իրավասություն չուներ և նրան խորհուրդ են տալիս դիմել Երևանի թեմին: Հենց 1913 թվականի փետրվարին Երևանի փոխ-թեմակալին ուղղված գրության մեջ խնդրում են «…խառն ժողուի կողմից միջնորդիլ Ն. Կայս. Մեծ. Կովկասի փոխարքայից ձեռք բիրիլու հրապարակական հանգանակութեան համար պատշաճաւոր թույլտուիթիւն»:

Հանգանակությունն այդպես էլ չի կայանում, և ծխական դպրոցն իր գոյությունը շարունակում է պահպանել նյութական ծանր վիճակում: Մի կողմից շենքի՝ ծխականին հատկացված մասը գտնվում էր անբարվոք վիճակում, իսկ մյուս կողմից՝ խիստ սահմանափակ էին այն պահպանելու նյութական միջոցները:

Դպրոցական շենքի վերանորոգման և ուսուցիչների աշխատավարձերի պարտքերի մարման հարցում միակ հույսը մնում է ծխական տուրքը: 1913 թ. հունիսի 26-ին հոգևոր իշխանության Զանգեզուրի գործակալ Գարեգին քհն. Տեր-Մինասյանը դիմում է I մասի հաշտարար միջնորդ Վոսկրեսենսկուն և խնդրում, որպեսզի վերջինս «…հրաման արձակի Խնձորեսկի տանուտիրին անարգիլ ժողու կայացնիլու… դպրոցի առաջիկայ ուսումնական տարվայ նյութականը ապահովիլու…»: Սակայն հաշտարար-միջնորդը պատասխանում է, որ արգելել է առանց իր ներկայությամբ ժողով գումարել, մանավանդ, եթե հարցը վերաբերվում է եկեղեցական-ծխական դպրոցին: Վոսկրեսենսկին այս մերժումը հիմնավորել է, թե իբր Խնձորեսկը նախկինում մի քանի անգամ հրաժարվել է ծխական տուրքից, և որ նորից այդ կապակցությամբ համախոսական կազմելն արգելում է: Միաժամանակ, Վոսկրեսենսկին պատասխանում է, որ ինչ վերաբերում է ուսուցիչների աշխատավարձերի պարտքը փոխհատուցվելուն, ապա ինքը պատրաստ է աջակցելու ապառիկների հավաքմանը:

Ակնհայտ երևում է, որ հաշտարար-միջնորդի համար գյուղի հասարակության ծխատուրքից հրաժարվելն ընդամենը

առիթ էր: Իրականում ոչ թե հասարակությունը հրաժարվում էր դպրոցի համար ծխատուրք հավաքելուց, այլ չէր վստահում դպրոցի հոգաբարձությանը, իսկ թե ինչքանով էր արդարացված այդ անվստահությունը, դժվար է ասել:

Երևանի փոխթեմակալին ուղղված հայտարարության մեջ դպրոցի հոգաբարձությունը գրում է, որ 1911 թ. նոյեմբերի 17-ից ընտրվել են Հոգաբարձության անդամներ և ամեն գնով փորձել են ապահովել ծխական դպրոցի տնտեսական կարիքները: Եվ չնայած ժողովի կողմից կայացրած համապատասխան որոշմանը, գյուղի ժողովուրդը «տրժիլով իր գրաւոր որոշումնիրը», հրաժարվում է ծխատուրք վճարելուց, իսկ ուսուցիչները դիմել են դատարան՝ աշխատավարձերի հարցով: Հոգաբարձությունն առաջարկում է հրավիրել նոր ժողով, նոր հոգաբարձության «իսկական ընտրութիուն» կատարելու, դպրոցի կարիքները հոգալու և դատարանում հանդես գալու նպատակով:

1913 թ. հուլիսի 12-ին հոգաբարձության Խորեն եպս. Մուրադբեկյանին ուղղված գրությունից երևում է, որ տեղի է ունեցել դատավարություն և բավարարվել է ուսուցիչների հայտը: Հոգաբարձությունն արդյունքում հայտնվել է ցայտնոտային իրավիճակում, քանի որ ուսուցիչներին վճարվող աշխատավարձի ընդհանուր գումարից պակասում է 350 ռուբլի, որը հոգաբարձությունը, իր իսկ պնդելով, նախկինում ծախսել է դպրոցի կարիքները հոգալու նպատակով:

Ծխական դպրոցը կարծես ճակատագրով էր դատապարտված գտնվել անվերջ գոյապայքարի մեջ: 1915 թ. հունվարի 20-ին Տաթևի վիճակի թեմ. տեսուչ Հ. Գևորգբեկյանի զեկուցումից երևում է, որ դպրոցը գտնվում էր խղճուկ ու անբարվոք վիճակում և պարապմունքներն իրականացնում էր «իրեք նեղուածք սինիակներում»[1]: Տեսուչը ցավով նշում է, որ մյուս դասարանները, որոնք ավելի մեծ էին, կնքված էին ոստիկանության կարգադրությամբ: Կնքման պատճառ է հանդիսացել, ինչպես գրավոր պատճառաբանել է տանուտերը,

[1] ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 724, թ. 8:

պատերի ճաքը, որը վտանգավոր է երեխաների համար: Տեսուչը տեղեկացնում է, որ տնտեսական ծանր վիճակում գտնվող գյուղում չկան անհրաժեշտ միջոցներ դրանք վերանորոգելու համար: Միակ ելքը, ինչպես հայտնում է տեսուչը, ավագ ուսուցիչ Բագրատ Ղարագյոզյանին Բաքու ուղարկելն է, տեղի խնձորեսկցիներից միջոցներ հայթայթելու նպատակով: Միաժամանակ նա նշում է, որ եթե կնիքված դասարաններն օգտագործվեր, «…աշակերտաց թիւը 300-ից կանցնէր»[1]:

Տեսուչը բնութագրում է նաև դասավանդող ուսուցիչներին՝ Հարություն Տեր-Իսրայելյանին, Ալեքսանդր Մելքոնյանին և Բագրատ Ղարագյոզյանին: Բարձր գնահատելով վերջինիս՝ որպես ուսուցչի, տեսուչը գրում է. «…այս գիւղի ծխական դպրոցը չտապալւից, այդ միայն շնորհիւ ուսուցիչ Ղարագյոզյանի անձնազոհության»[2]: Բ. Ղարագյոզյանը, ինչպես երևում է փաստաթղթից, հետագայում մեկնել է Բաքու և այնտեղ ձևավորել խնձորեսկցիների «Համագյուղացիական միություն»[3]: Ստեղծվել էր նաև մի փոքրիկ ձեռնարկություն, որը կարող էր ապահովել տարեկան 1000 ռուբլի, ինչը լուրջ միջոց է հոգալու դպրոցի հոգսերը:

1916 թվականին ավագ ուսուցիչ Բ. Ղարագյոզյանի կազմած 1915-16 թթ. ուստարվա միամյա տեղեկագիրը որոշակի պատկերացում է տալիս ծխական դպրոցի գործունեության ու ծառացած խնդիրների մասին: Անցած հինգ տարիների ընթացքում դպրոց է հաճախել յուրաքանչյուր տարի միջինը 143 աշակերտ-աշակետուհի, իսկ տարվա վերջին աշակերտների թիվը հասել է 155-ի: Նշված ուսումնական տարում այդ թիվը նվազել է՝ հասնելով 92-ի: Աշակերտների թվաքանակի նվազումը բացատրվում է անցյալ տարվա երաշտի ծանր հետևանքներով, արտագաղթով, դասարանների նեղվածությամբ, ինչպես նաև պետական դպրոցի առկայությամբ: «Եթե մի թեթեւ ակնարկ

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, թ. 9:
[3] Նույն տեղում, թ. 10:

ձգելու լինինք պետականի վրայ, - գրում է տեղեկագրի հեղինակը, - այնտեղի 90 աշակերտից 70-ը մերոնցից են»:

Բացի ծխական ու պետական դպրոցներից՝ Խնձորեսկում գործել են նաև մասնավոր դպրոցներ: Հավանաբար այս դպրոցներն իրենց գոյությամբ կարողացել են իրենց շուրջը համախմբել որոշակի քանակությամբ աշակերտների, հակառակ դեպքում ավագ ուսուցիչը չէր բողոքի դրանց դեմ՝ գրելով. «Մասնաւոր դպրոցների գոյությունը, որոնք միշտ էլ շարունակել են իրենց շուրջը համախրմբել ահագին աշակերտութիւն տգետ, հնազանդ ծնողների եւ անպէտք տանուտէրների անտարբեր վերաբերմունքի եւ այսպիսով ոչ աննշան կերպով նպաստել դպրոցիս անհաջողութիւնը»:

Գյուղում գործող մասնավոր դպրոցների դեմ անզիջում պայքար սկսեցին՝ ներգրավելով նաև թեմական տեսուչին: 1916 թ. հունվարի 13-ին թեմական տեսուչը գալիս է Խնձորեսկ և «…օրինաւոր միջոցներով արմատախիլ արեցին վերջնականապէս այդ խալիֆայական որջերն ու տանջարանները»:

Չնայած այս գողգոթային՝ ծխական դպրոցը շարունակեց իր առաքելությունը՝ գյուղում գործող պետական դպրոցին զուգահեռ: 1912-1913 թթ. դպրոցն ունեցել է 140 աշակերտ[1], 1913-1914 թթ. ուստարում՝ 145[2], 1915-1916 թթ.՝ 93[3], 1916-1917 թթ.՝ 122[4]: Տարբեր տարիներին դպրոցում դասավանդել են Բագրատ Ղարագյոզյանը, Թեոդորոս Մայսուրյանը, Գևորգ Աֆրիկյանը, Արամ Տեր-Հարությունյանը, Ալեքսանդր Մելքումյանը:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս վավերագրերը, Խնձորեսկի եկեղեցական-ծխական դպրոցի ճանապարհը հարթ չի ընթացել, այլ իր գոյության ամբողջ ընթացքում ստիպված է եղել հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ՝ այդպես ապացուցելով դեպի կրթական լույսն ունեցած հայ ժողովրդի յուրօրինակ պաշտամունքը:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ, 56, ց. 15, գ. 627, թ. 29-30:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ, 7, ց. 1, գ. 162, թ. 28-29:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ, 7, ց. 1, գ. 165, թ. 25-26:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ, 7, ց. 1, գ. 167, թ. 27-28:

Գրականություն

1. **Աբեղյան Մ.**, **Գևորգ Դ.**, Մեծագործ կաթողիկոս ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1899, 264 էջ:
2. **Ավանեսյան Ա., Հարությունյան Գ.,** Արցախի կրթական համակարգը, հ. Ա, Ստեփանակերտ, 2014, 479 էջ:
3. «Գաւառ», Գօրիս, 1909, 2010:
4. **Խուդոյան Ս.,** Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ. (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1987, 617 էջ:
5. Կանոն Յաղագս ծխական հոգեւոր դպրոցացն Հայոց որ ի Ռուսաստան, «Արարատ», Ս. Էջմիածին, Վաղարշապատ, 1868, № Զ, էջ 70-72:
6. Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, , ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 1051:
7. ՀԱԱ, ֆ. 7, ց. 1, զգ. 88, 113, 15, 162, 165, 167; ֆ. 56, ց. 15, զգ. 32, 40, 130, 235, 265, 300, 544, 627, 724; ց. 16, գ. 470:

ԽՆԶՈՐԵՍԿԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՄՓՈՓՈՒՄ

ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խնձորեսկը Սյունիքի հնագույն ու մեծ բնակավայրերից է: Սկզբնաղբյուրներում այն հիշատակվում է տակավին վաղ ժամանակներից: Գյուղը հայտնի է որպես գրչակենտրոն: Այստեղ ընդօրինակվել են մի շարք ձեռագիր մատյաններ: Կրթական կյանքի աշխուժացման պայմաններում 19-20-րդ դդ. Խնձորեսկում գործել է եկեղեցական-ծխական դպրոց, ուր սովորել են շուրջ հինգ տասնյակ աշակերտներ: Իր արդյունավետ գործունեությամբ՝ ծխական դպրոցը որոշակի հետք է թողել Սյունիքի՝ 19-րդ դարիավերջի և 20-րդ դարասկզբի գիտամշակույթային կյանքում:

Բանալի բառեր- Սյունիք, Տաթև, Խնձորեսկ, եկեղեցական-ծխական դպրոց:

ИЗ ИСТОРИИ ХНДЗОРЕССКОЙ ЦЕРКОВНО-ПРИХОДСКОЙ ШКОЛЫ

РЕЗЮМЕ

ГРИША АРУТЮНЯН

Хндзореск один из самых древних и больших поселений Сюника. В источниках оно упоминается еще с древних времен. Поселение известен как пен-центр, где были написаны много рукописей. В XIX веке, когда образование улучшилась, открылась церковно-приходская школа, где учились около пятидесяти учеников. Своей деятельностью школа оставила свои следы в Сюникской научно-культурной жизни в конце XIX и в начале XX века.

Ключевые слова: Сюник, Татев, Хндзореск, церковно-приходская школ.

ABOUT THE HISTORY OF THE CHURCH ADJACENT SCHOOL OF KHNDZORES

SUMMARY

GRISHA ARUTYUNYAN

Khndzoresk is one of the biggest and ancient settlements of Syunik. In the historical sources it has been mentioned since the earliest times. The village was known as a manuscript centre. A range of manuscripts have been copied here. As the academic life became vivacious, a church adjacent school was operating in Khndzoresk. Around fifty apprentices attended the school. Due to its effectiveness the church school left a certain impact on the scientific-cultural life of Syunik in the late 19th and early 20th centuries.

Key words: Syunik, Tatev, Khndzoresk, church adjacent school.